

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ  
 ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԻ/ՔՈՎԻԴ-19-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
 ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում ամբուլատոր փուլում բուժում ստացող տուբերկույրոզով հիվանդներին և նրանց ընտանիքի անդամներին, ինչպես նաև ՀՀ ազգաբնակչության շրջանում խարանի խտրականության նվազեցում և ՏԲ/Քովիդ-19-ի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով նախատեսված արտոնություններից:
3.	Բարեգործը	ԶԻԱՀ-ի, տուբերկույրոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամ
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Քաղաք Երևան և ՀՀ մարզեր, բնագավառը՝ առողջապահություն, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	16,082,500 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ամբուլատոր փուլում բուժում ստացող տուբերկույրոզով հիվանդներ և նրանց ընտանիքի անդամներ, ՀՀ ազգաբնակչություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հունվարի երեքից մինչև 2022 թվականի դեկտեմբերի երեսունմեկը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ 1. Սոցիալ-հոգեբանական աջակցություն տուբերկույրոզով հիվանդներին և նրանց ընտանիքի անդամներին, մասնավորապես անհատական տեղեկատվական բնույթի հանդիպումների կազմակերպում տուբերկույրոզի և Քովիդ-19-ի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում

		<p>հոգեբանական, ինչպես նաև սոցիալական աջակցության տրամադրում սննդային փաթեթների տեսքով: /03. 01. 2022-31. 12. 2022 թթ., 10,450,000 դրամ ընդհանուր արժողությամբ/</p> <p>2. ՀԿԽԸ կամավորների համար դասընթացների կազմակերպում: /03. 01. 2022-31. 12. 2022 թթ., 250,000 դրամ ընդհանուր արժողությամբ/</p> <p>3. Տուբերկուլյոզի և Քովիդ-19-ի վերաբերյալ հանրային իրազեկում, որը ներառում է տեղեկատվական տեսանյութի պատրաստում և հեռարձակում /03. 01. 2022-31. 12. 2022 թթ., 2,670,000 դրամ ընդհանուր արժողությամբ/</p> <p>4. Կազմակերպչական ծախսեր՝ /03. 01. 2022-31. 12. 2022 թթ., 2,712,500 դրամ ընդհանուր արժողությամբ/</p>
10.	<p>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Միջոցառումների և դասընթացների դահլիճի վարձակալություն, հյուրանոցային ծառայությունների և սննդի ձեռքբերում՝ 250,000 դրամ ընդհանուր արժողությամբ</li> <li>2. Սննդային փաթեթների ձեռքբերում՝ 1,950,000 դրամ ընդհանուր արժողությամբ</li> <li>3. Տեղեկատվական տեսանյութի պատրաստման և հեռարձակման ձեռքբերում՝ 2,670,000 դրամ ընդհանուր արժողությամբ</li> <li>4. Վառելիքի ձեռքբերման և մեքենայի պահպանման ծախսեր՝ 875,000 դրամ ընդհանուր արժողությամբ</li> </ol>
11.	<p>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</p>	<p>Ծրագրի կազմակերպական ծախսեր՝ 2,712,500 դրամ, որը ներառում է ծրագրի աշխատակազմի գործուղումները, աշխատակազմի և կամավորների հեռախոսավճարի փոխհատուցման գումարը, ինչպես նաև վառելիքի ձեռքբերման և մեքենայի պահպանման ծախսերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ:</p>
12.	<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագիրը իրականացվելու է Երևանում և ՀՀ մարզերում պոլիկլինիկաների և ամբուլատորիաների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:</p>

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ ՁԻԱՀ, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: Նաև ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:
-----	--	---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ